ՄԻ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԲԱՐԵՐԱՐ ՌՈՄԱՆ ԻՍԱԵՎԻ ՀԵՏ

Վերջապես առիթ ունեցանք մի օր մի ժամ խլելու բազմազբաղ պ. Ռոման Իսաևից և նա խիստ ոգևորված ու սիրալիրությամբ պատասխանեց մեր տված հարցումներին։

— Ի՞նչպես կարողացաք թողնել ձեր բոլոր գործերն ու մեկնել Ս. Էջմիածին։

«Շատ դժվարություններով, մի կերպ կարգադրեցի, որպեսզի կատարեի ինձ վրա դրված սրբազան պարտականությունը։ Գործերիս պատճառով էր, որ ուշացա։ Մեկնեցի հունիս 18-ին, գիշերը՝ ժամը 12-ին իմ սեփական Լինքոլն մեքենայով, որը տանում էի նվիրելու նոր ընտրվելիք Կաթողիկոսին։

«Կես օրից հետո ժամը 1-ին հասանք Թավրիզ։ Մելիք-Թանգյան սրբազանը և Թավրիզի թեմականն ինձ հյուրասիրեցին մինչև ժամի 7։ Գիշերը, ժամի 11-ին Սովետական Ջուլֆա էի, ուր ներկայացա կամենտանտին։ Նա քնած էր, զարթնեց և ընդունեց ինձ մեծ սիրալիրությամբ։ Ասաց, որ կարգադրված էր ինձ թողնել անցնել իմ մեքենայով, բայց քանի որ սահմանը փակվում էր ժամի 9-ին, ուստի պարտավոր էի մնալ մինչև առավոտ։ Մինչդեռ, ինչպես ինձ ասված էր, ես ակնկալում էի, որ հեռախոսած լինեին այս առթիվ, բայց նա տեղեկություն չուներ։ Երբ ընթրում էինք, շտապ մի Վիլիս մեքենա եկավ, որի մեջ գտնվում էր պատգամաբեր մի պաշտոնյա։ Հեռախոսը փչացած լինելու հետևանքով ուղարկել էին նրան Թավրիզից հայտնելու, որ սահմանը բացեն և թողնեն ինձ մեկնել։

«Անցա սահմանը, ինձ ընդունեց Ինտուրիստի կառավարիչը և ճանապարհեց Երևան։

«Երևանում մեծ պատվով ընդունեց ինձ դարձյալ Ինտուրիստի կառավարիչը և տեղավորեց եվրոպական տիպի մի հիանալի հյուրանոցում տրամադրելով ինձ մի մեծ սրահ, մի սենյակ և իր բաղնիքը։

«Ես 30 տարի առաջ եղել էի Երևանում։ Դա մի քաղաք էր, որն ավելի շուտ մեծ գյուղի էր նմանում։ Իսկ այժմ, ինչպես տեսա և տեղեկացա, աննկարագրելի բարեփոխության է ենթարկվել, և, չափազանցրած չեմ լինի, եթե ասեմ, որ դարձել է մի փոքրիկ Փարիզ։

«20 տարիների ընթացքում ռուս մեծ ժողովրդի օգնությամբ Սովետական Հայաստանում նախ քան Հայրենական պատերազմը մեծ թափ ու թռիչք է առել հանրապետության գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը, առողջապահությունը, գիտությունն ու արվեստը։

«Շնորհիվ Սովետական Հայաստանի աշխատավորության անձնազոհ ճիգերի իրականացել է երկրի էլեքենայացումը, գործարանները, կարգադրեցի, որպեսզի կատարեի ինձ վրա դրված սրբազան պարտականությունը։ Գործերիս պատճառով էր, որ ուշացա։ Մեկնեցի հունիս 18-ին, գիշերը՝ ժամը 12-ին իմ սեփական Լինքոլն մեքենայով, որը տանում էի նվիրելու նոր ընտրվելիք Կաթողիկոսին։

«Կես օրից հետո ժամը 1-ին հասանք Թավրիզ։ Մելիք-Թանգյան սրբազանը և Թավրիզի թեմականն ինձ հյուրասիրեցին մինչև ժամի 7։ Գիշերը, ժամի 11-ին Սովետական Ջուլֆա էի, ուր ներկայացա կամենտանտին։ Նա քնած էր, զարթնեց և ընդունեց ինձ մեծ սիրալիրությամբ։ Ասաց, որ կարգադրված էր ինձ թողնել անցնել իմ մեքենայով, բայց քանի որ սահմանը փակվում էր ժամի 9-ին, ուստի պարտավոր էի մնալ մինչև առավոտ։ Մինչդեռ, ինչպես ինձ ասված էր, ես ակնկալում էի, որ հեռախոսած լինեին այս առթիվ, բայց նա տեղեկություն չուներ։ Երբ ընթրում էինք, շտապ մի Վիլիս մեքենա եկավ, որի մեջ գտնվում էր պատգամաբեր մի պաշտոնյա։ Հեռախոսը փչացած լինելու հետևանքով ուղարկել էին նրան Թավրիզից հայտնելու, որ սահմանը բացեն և թողնեն ինձ մեկնել։

«Անցա սահմանը, ինձ ընդունեց Ինտուրիստի կառավարիչը և ճանապարհեց Երևան։

«Երևանում մեծ պատվով ընդունեց ինձ դարձյալ Ինտուրիստի կառավարիչը և տեղավորեց եվրոպական տիպի մի հիանալի հյուրանոցում տրամադրելով ինձ մի մեծ սրահ, մի սենյակ և իր բաղնիքը։

«Ես 30 տարի առաջ եղել էի Երևանում։ Դա մի քաղաք էր, որն ավելի շուտ մեծ գյուղի էր նմանում։ Իսկ այժմ, ինչպես տեսա և տեղեկացա, աննկարագրելի բարեփոխության է ենթարկվել, և, չափազանցրած չեմ լինի, եթե ասեմ, որ դարձել է մի փոքրիկ Փարիզ։

«20 տարիների ընթացքում ռուս մեծ ժողովրդի օգնությամբ Սովետական Հայաստանում նախ քան Հայրենական պա-

Բարերար Ռոման Իսաեվը և Իրանա-Հնդկական թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Կոստանյանը Իրանի պատգամավորների հետ

տերազմը մեծ թափ ու թռիչք է առել հանրապետության գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը, առողջապահությունը, գիտությունն ու արվեստը։

«Շնորհիվ Սովետական Հայաստանի աշխատավորության անձնազոհ ճիգերի իրականացել է երկրի էլեքենայացումը, գործարանները, կարբիտի, ձեթի, օճառի, սինտետիկ կաուչուկի, կոնսերվի, պղնձաձուլման և մեքենաշինության և այլ գործարանները։

«Զարգացել է տեկստիլ արդյունաբերությունը, մանվածքային, չթի և այլ։ Կառուցվել են կոշիկի, գուլպայի, տրիկոտաժի և շատ ուրիշ գործարաններ։

«Անտառարդյունաբերությունը, ձկնարդյունաբերությունը, հիդրոկայանների կառուցումը, երկրի բնական հարստությունների օգտագործումը, շինանյութերի արտադրությունը, կոնյակի և գինիների, ծխա-

խոտի գործարանները և բազմաթիվ այլ ձեռնարկություններ ոչ միայն ապահովել են հանրապետության ներքին պահանջները, այլև օգտակարորեն նպաստել են Սովետական Միության ուրիշ վայրերին արտահանելով տուֆ, ցեմենտ, կարբիտ, կաուչուկ, սիդինձ, գինի, կոնյակ, բամբակի կտորեղեն, տրիկոտաժ, ծխախոտ և այլն, փոխարենը ներմուծելով մեքենաներ, կտորներ, ներկ, թուղթ, երկաթ, պողպատ և այլն։

«Պատերազմի իսկ օրերին ստեղծվել են 30-ի չափ նոր գործարաններ՝ ժամացույցի և այլն և արտադրվել են մեծ թվով նոր իրեր։

«Վերաշինվել են հայկական գյուղերը Սովետական վարչաձևի տակ։ Հայ գյուղացին ազատվել է իր նախկին թշվառությունից և երջանիկ կյանքի դռները բացվել էն նրա առաջ շնորհիվ սովետական իրավակարգի։ Հողը օգտագործվել է աշխատավորության կողմից։ Անհատական ցան ու ցրիվ տնտեսությունների փոխարեն գյուղացիները միացել են կոլեկտիվ տնտեսությունների մեջ։ Կարգավորվել է ոռոգման խնդիրը։ Կառուցվել են մի շարք ջրանցքներ և մշակվել նոր հողամասեր, մեծ չափով աճել ու զարգացել է բերքատվությունը։

«Առաջացել է նաև անասնապահությունը և նրա հարակից կարիքները։

«Գյուղում նահապետական կյանքը փոխվելով կոլտնտեսականի՝ կուլտուրան, լուսավորությունն ու գիտությունը ներս են մտել այնտեղ մեծ չափով։

«Մայր Հայրենիքի մշակույթը՝ արվեստը, կրթությունը և գիտությունը նախապատերազմական 20 տարիների շրջանում մեծ և կարևոր թռիչք են ունեցել։ Ամենուր հիմնվել են դպրոցներ, մտցվել է լոթնամյա պարտադիր ուսում, այլևս չկա ոչ մի անգրագետ, հաստատվել են ֆակուլտետներ, զանազան ինստիտուտներ։ Բարձրագույն դպրոցներից շրջանավարտ են եղել մեծաթիվ մասնագետներ։ Բազմապատկվել ու կրկին կրկնապատկվել են դրադարանները։

«Փթթել ու ծաղկել են գիտությունն ու արվեստը, հայ հնադարյան մշակույթը։ Ստեղծվել է հայկական Ակադեմիան, ուսումնասիրվել ու վերահրատարակվել են Հայ անվանի հեղինակների ստեղծագործությունները։ Հիանալիորեն կազմակերպվել է Մատենադարանը, որը շտեմարանն է հնադարյան ձեռագրերի։

«Գրականությունը, թատրոնը, օպերան, ժողովրդական երգերը, պարը, երաժշտությունը աննկարագրելի առաջադիմություն են ունեցել մայր հայրենիքում և կազմում են մեր ժողովրդի փառքն ու պարծանքը։

«Սովետական Հայաստանում մեծ ուշադրության առարկա է դարձել ժողովուրդի առողջապահությունը. այս ուղղությամբ ստեղծվել են մի շարք կարևոր հիմնարկներ, հիվանդանոցներ։ Ուժեղ և ազդու պայքար է մղվել բոլոր համաճարակների դեմ։ Առողջապահական բոլոր պայմանները տարածվել են գյուղերում, ուր հաստատվել են մանկամատուրներ։ Ընդհանուր առմամբ Սովետ Հայաստանում մեծապես զարգացել է բժշկական գիտությունը։

«Կուզեի մասնավորապես շեշտել իբրև մի օրինակ Երևանի Կենդանաբանական պարտեզի մասին։ Ես որ եղել եմ Եվրոպայի գրեթե բոլոր մայրաքաղաքներում և դիտեմ, որ ամենագեղեցիկ կենդանաբանական պարտեզը գտնվում է Հռոմում իր սքանչելի տեսքով և ձևակերպմամբ, պիտի անկեղծորեն խոստովանվեմ, որ հենց այդ իսկ տեսակետից Երևանի մեր Կենդանաբանական պարտեզը ոչնչով ետ չի մնում իր բնական տեսքով և գեղեցկությամբ։ Եվ զարմանալին այն է, որ այդ պարտեզը ստեղծվել է Հայրենական պատերազմի օրերում, միայն երեք տարվա ընթացքում և ունի արդեն բավական կենդանիներ։

«Այսօր Սովետական Հայաստանը միանգամայն հակոտնեական է վաղեմի խղճուկ, ավերված, անմշակ, քար ու քանդ Հայաստանի։ Այսօր լույսն ու գիտությունը, արվեստն ու ճարտարարվեստը, երկրագործությունն ու շինարարությունը իրենց թևերն են տարածել մեր չքնաղ հայրենիքի վրա։

«Այսօր ամեն մի հայ, կին թե այր, մեծ թե փոքր, բոլորն էլ գլուխները բարձր, գիտակից ու հպարտ են, որ իրենց փոքրիկ Հայաստանը աջակցությունն ու հովանին է վայելում մեծ Սովետական Միության, որի հանճարեղ Ղեկավարն ու Առաջնորդն է Ժեներալիսիմ Ստալինը։ Ես շատերի հետ խոսեցի և տեսա ու լսեցի, որ նրանց բոլորի սրտերում ու հոգու մեջ լավագույն տեղն է գրավել ՄԵԾ ՍՏԱԼԻՆԸ իր հայրական խնամատար սիրով։

«Հայրենական պատերազմի ընթացքին հայ ժողովուրդը Սովետական Հայաստանում ոտքի կանգնեց. մեծ թե փոքր, երիտասարդ թե ծեր, այր թե կին, ռազմաղաշտում թե թիկունքում, և հերոսաբար կռվեց ֆաշիստ զավթիչ գերմանացիների ու նրանց արբանյակների դեմ, որոնք հասել էին

մինչև Կովկասյան լեռնաշղթան ու սպառնում էին անգամ Սովետական Հայաստանին։ Սակայն հայ ժողովուրդը իր զոհաբերություններով, թիկունքի և ճակատի իր հերոսներով պատվավոր տեղ գրավեց Սովետական Միության մյուս ժողովուրդների կողքին, ֆաշիզմի և հիտլերիզմի չախջախման փառապանծ հաղթանակի մեջ»։

(«Վերածնունդ», հուլիս, թիվ 160—1291)

ԲԱՑ ԴԱՄԿԱ

Այս առավոտ Հայաստան էի, իսկ կեսօրին արդեն Թեհրան եմ, և չի մեկնած Թեհրանեն կուզեմ Հայաստանի մեծ ժողովրդին հայտնել ձեր միջոցով իմ շնորհավորություններս և շնորհակալություններս այն մեծ արժանիքներուն և արդյունքին, որ տեսա և բոլոր այն մեծ հյուրասիրության համար, որ ցուցուցին ինձ, երբ ընտրությանց առթիվ Երևան գտնվեցա։

Շատ շիտակ է այն խոսքը, որ մեր մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը ըսաւ՝ «Լավը մնայուն է, վատը գնայուն»։

Բնական է ժամանակ չունեցա շատ բան տեսնելու, քանի որ ընտրությանց

Տեսա երիտասարդ նկարիչներ, քանդակագործներ իրենց գեղեցիկ արտահայտություններով, կողքին արդեն վաղուց աշխարահռչակ վարպետներու։

Տեսա երիտասարդ բժիշկներ իրենց ալեհեր մենտորներուն հետ, տեսա թանգարանը իր պատմական հայ հնություններով, տեսա մանուկներ և պատանիներ, որոնք իրենց ժպիտներով ոչ միայն հմայեցին մեզ, այլ նաև ապացուցին թե մեկ մեկ ապագա հանճարներ են, տեսա և լսեցի հայկական օպերան, որ հպարտորեն կրնա իր տեղը գրավել լավագույնիս հետ, տեսա Հայ թատրոնը իր տիտաններով, տեսա



Լոնդոնի պատգամավորները

խնդիրը կար, բայց տեսա կրցածիս չափ, թե լավը և թե վատը, տեսա դպրոցներ, տեսա համալսարանը և անոնց արդյունքը գործնական, տեսա երիտասարդ տղաք, որոնք արդեն խոշոր և լուրջ գործեր ստանձնած են, տեսա ինքը երիտասարդ րէքթորը համալսարանին, որ հակառակ իր երեք տասնյակ տարիներուն, արդեն ֆսկ։ Տիտանի մեծ գործը կը կատարե 60-ամյայի մը գիտակցությամբ։

հայկական պարերգ հայ աղջիկներով՝ գեղանի և հայ տարազներով, տեսա հայ սինեման, որ շատ հաջող կերպով ի վիճակի է մրցելու լավագույնիս հետ, տեսա հայ մարզիկները գեղեցիկ, շնորհալի և առողջ սարմիններով, տեսա Արարատի գինիի և կոնյակի ֆաբրիկան, տեսա վերջապես Հայաստանի հողը, որմե պստիկ պարկ մը հետս Լոնդոն կտանիմ, բոլորին պտղուց մը տալու համար և խմեցի Երևանի կյանք